

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 156

Աստուծոյ գերիշխան գործ – Աստուածաբանութեան մէջ կան երկու կարեւոր բառեր, որոնք զանազանում են, բաժանում են, Վերակազմ հաւատքը բոլոր ուրիշ տեսանկիւններից վերածնութեան գործի նկատմամբ: Այս բառերն են՝ մենակատարութիւն (monergism) եւ համակատարութիւն (synergism): Մենակատարութեան վերաբերեալ, «mono» նախամասը նշանակում է մէկ (monopoly - մենավաճառ, monorail – մէկ երկաթագիծ), եւ արմատ «erg» բառը որը նշանակում է գործի մի միաւոր կամ չափ (energy), եւ «ism» յետնամասը որը նշանակում է մի դիտանկիւն կամ գաղափար: Ուստի «monergism» կամ մենակատարութիւնը ակնարկում է մի գործ որը կատարում է մէկ անձի միջոցով: Սրա հակառակն է «synergism» կամ համակատարութիւն՝ ուր «syn» նախամասը նշանակում է միասին կամ մի բանի հետ (synchronize, synagogue), ուրեմն մի գործ որը կատարում է երկու կամ ատիւ անձերի միջոցով:

Վերակազմ աստուածաբանութիւնը հաստատում է թէ վերածնութիւնը մի մենակատար գործ է՝ այսինքն Աստուածն է միայն մէկը որը կատարում է մարդու սրտի մէջ եղած այս փոփոխութիւնը՝ անկախ մարդու կամքից կամ աշխատանքից: Մարդ արարած բոլորովին կրաւորական է (անգործ է) վերածնութեան մէջ (Յովհաննէս 1:13, Հռովմայեցիս 9:16, Բ. Տիմոթէոս 1:9): Մի հոգեւոր մեռած մարդ անկարող է անելու որեւէ հոգեւորապէս բարի բան, եւ ակամայ է անելու որեւէ հոգեւորապէս բարի բան (Երեմիա 13:23, Յովհաննէս 3:20, Հռովմայեցիս 3:11, 8:7-8): Որոնք էլ նրանց արարքն է որոնց սրտերը փոխել են: Ուստի վերստին ծնունդը մի համակատար աշխատանք չի Աստուծոյ եւ մարդու միջեւ՝ ուր Աստուած նախաձեռնում է գործը բայց պէտք ունի մարդու համագործակցութիւնը որպէսզի այդ ազդեցիկ դառնայ:

Աստուծոյ անդիմադրելի գործ – Աստուծոյ ազդեցիկ կոչումը նաեւ երբեմն ակնարկում է որպէս անդիմադրելի շնորհք: Այս չի նշանակում որ Աստուած ստիպում կամ պարտաւորում է մի մեղաւորին որ հաւատայ Յիսուսին իր կամքի հակառակ: Այլ, Աստուծոյ այս կոչումը անդիմադրելի է այդ իմաստով որ Աստուած գերիշխանօրէն կատարում է Իր կարգադրած նպատակը մեղաւոր մարդու մէջ: Սուրբ Հոգին փրկում է մեզ մեր մեղքի գերութիւնից, ազատում է մեր կամքը, վերացնում է մեր դիմադրութիւնը, եւ տալիս է մեզ Իր հանդէպ եղած մի փափագ: Ինչպէս Ուեստմինստըր Հաւատոյ Հանգանակը ասում է, նրանք որ այսպէսի ազդեցիկօրէն քաշում են դէպի Քրիստոս «գալիս են անշուշտ ազատօրէն, Իր շնորհքով յօժարական դարձրած» (Գլուխ 10, Բաժին 1): Այս Աստուծոյ մի յատուկ գործ է, կատարւած ոչ բոլոր մարդկութեան համար, եթէ ոչ ըստ Քրիստոսը բոլորը պիտի գային Նրան. բայց այս կատարւած է միայն նրանց համար որ Հայրը տւել է Որդուն, նրանց որոնց Նա ընտրել է, եւ նրանք բոլորը կ'զան Յիսուսին՝ առանց որեւէ բացառութեան (Յովհաննէս 6:37, 44): Ընտրեալները Հօր նւէրներն են Իր Որդուն (Յովհաննէս 17:1-2, 6-12, Եբրայեցիս 2:10-13), որոնք կ'պահեն մինչեւ վերջը: Այս է այդ ինչ որ նշանակում է Աստուծոյ անդիմադրելի շնորհքով, քանի որ այդ ազդեցիկ է եւ երբեք չի ձախողուի (Մաղմուս 65:4):

Աստուծոյ խորհրդաւոր գործ – Նիկողեմոսի հետ խօսելուց, Յիսուսը նմանեցրեց քանի եւ Սուրբ Հոգու վերածնութեան գործը (Յովհաննէս 3:7-8): Ճիշտ այնպէս որ քամին փչում է ուր որ ուզում է, նոյնպէս էլ Սուրբ Հոգին վերածնում է ինչպէս որ Նա ուզում է: Եւ ճիշտ այնպէս որ քամին անտեսանելի է, եւ մենք չգիտենք թէ որ տեղից է գալիս եւ որ է գնում, նոյնպէս էլ Սուրբ Հոգին անտեսանելի է, ու Նրա գալ ու գնալը խորհրդաւոր է: Մենք չգիտենք թէ Նա ինչպէս է յարուցանում հոգեւորապէս մեռածին, քանի որ այս Աստուծոյ մի ներքին, աներեւոյթ ու գաղտնի գործ է: Թէպէտ քանի գործը խորհրդաւոր է մեզի, սակայն մենք տեսնում ենք եւ լսում ենք դրա արդիւնքները: Նոյն է ճիշտ է Սուրբ Հոգու վերածնութեան գործի նկատմամբ: Մենք տեսնում ենք Նրա գործի արդիւնքները՝ այսինքն մարդկանց փոխւած կեանքերը, որոնք սիրում են Աստուծուն ու Նրա Խօսքը, մինչդեռ չէին սիրում նախքան այդ:

Աստուծոյ անմիջական գործ – Վերածնութեան գործը մի անմիջական գործ է: Նախ, այդ նշանակում է թէ վերածնութիւնը մարդու բնութեան մի վայրկեանական փոփոխութիւն է, ու ոչ մի աստիճանական գործընթացք ժամանակի ընթացքում: Մի անձ կամ հոգեւորապէս մեռած է կամ կենդանի. չկայ միջին մի վիճակ: Երկրորդ, այդ նշանակում է թէ Աստուած վերածնում է մէկին առանց որեւէ միջոցներով: Ճիշտ ինչպէս Աստուած գոյութեան բերեց ստեղծագործութիւնը առանց որեւէ միջոցներով, ու ճիշտ ինչպէս Քրիստոսը բուժեց կոյրին, խուլին, կաղին ու մեռածին առանց որեւէ միջոցներով, նոյնպէս էլ Սուրբ Հոգին վերածնում է հոգեւորապէս մեռած մարդկանց առանց գործածելու որեւէ բան Իրենից ու Իր ամենագորութիւնից դուրս:

Վերածնութիւնը հաւատքին նախորդում է – Վերածնութիւնը հաւատքի պտուղը չի, այլ հաւատքն է վերածնութեան պտուղը: Նախքան վերածնուի, մարդը չունի որեւէ դիրքորոշում, հակում կամ փափագ Աստուծոյ ու Նրա բաների հանդէպ: Իսկ վերածնութիւնից յետոյ այդ մարդը հիմա հակամէտ է դէպի Աստուած: Մէկը պիտի նախ վերստին ծնուի նախքան որ կարողանայ ունենայ հաւատք (Յովհաննէս 3:3, 6:44, Եփեսացիս 2:1): Նրա հոգեւորապէս կոյր աչքերը, խուլ ականջները եւ մեռած սիրտը պիտի փոխուեն՝ ոչ թէ օգնութիւն ստանան, նախքան որ նա կարող լինի տեսնել, լսել ու ցանկանալ Քրիստոսին: Եւ երբ մէկը Աստուծոյ վերածնուի, նա կ'ապաշխարի եւ կ'հաւատայ Քրիստոսին (Եզեկիէլ 36:26-27, Ա. Յովհաննէս 4:19):